

Թեոփանեսի մոտ նա հիշում է, թե Քեոզորոս անվամբ մի լիբանանցի ասորի Հեկտապոլիս (Բաալբեք) քաղաքի շրջակայքում արաբների գեմ՝ ապստամբություն բարձրացրեց (էջ 134)։ Ուրեմն փյունիկեցի ժողովրդի լրիվ անհետանալուց (II դար) և արամեախոս դառնալուց հետո Փյունիկիա-Լիբանանի ազգաբնակչությունը համարվել է ասորի, մինչև լիբանանցի արաբ ժողովրդի սաղմնավորումը, որը կատարվեց արաբական նվաճումից մի քանի դար անց։

Թեոփանեսը հիշատակում է հայկական Մուշեղ անվան փառաշահական Մուշեղիկի հունական ձևվր՝ Մուսուլյակ (էջ 163)։ Արժե նշել, որ կա նաև հունական ձևին մոտիկ արաբական ձևը։ Արաբ աշխարհագրագետ Յակուտը իր աշխարհագրական բառարանում խոսելով Զերմաձոր (Ուադի-լ-Զարմ) տեղանվան մասին, վկայում է, որ այժմեղ իշխել է Մուշալիկ պատրիկը¹⁵։ որն ըստ

Հ. Նալբանդյանի, Սասունի Թոռնիկ իշխանի հայր Մուշեղը պետք է լինի¹⁶։

Թեոփանեսը հայ պատմիչներ Սեբեոսի ու Ղևմուզի և ասորի պատմիչ Գիոնիսիոս (կամ կարձեցյալ Գիոնիսիոս)՝ Տեմահրեցու հետ հանդիսանում է արաբական իսլամիզացիայի պատմության հնագույն աղբյուրներից մեկը, քանզի մեզ հասած հնագույն արաբ պատմիչից՝ Խալիֆա իբն Խալլաբից (մահացել է 854 թ., իսկ պատմության շարադրանքը հասցրել մինչև 845/846 թ.) կես դար շուտ է գրել իր ժամանակագրությունը և իբրև ստուգապատմ պատմագիր նրա տվյալները կարող են օգտագործվել արաբական իսլամիզացիայի պատմության մեջ լրացումներ կատարելու համար։

Հ. Բարթիկյանի այս նոր աշխատությունը մի կարևոր ներդրում է հայ բյուզանդագիտության և ընդհանրապես հայագիտության ասպարեզում։

auctore al Beladsori. Lugduni Bat., 1866, p. 162; H. Lammen s. La Syrie, précis historique, Beyrouth, 1921, I, p. 131—132.

¹⁵ Jacut's Geographisches Wörterbuch. Leipzig, 1924, II, S. 441.

¹⁶ Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, կազմեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 166։

Պատմ. գիտ. զոկտոբ. Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՒԹՅԱՆ

Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա, կազմեց Օգոստինոս Սեֆուլյան, հ. 3, 1983, 1216 էջ։

Անցյալ դարի կեսերին հայկական սկզբնաղբյուրների նկատմամբ առաջ եկած բուռն հետաքրքրասիրության թելադրանքով Վիեննայի Մխիթարյան միաբանության հայագիտական դպրոցի առաջ ծառանում է համապարփակ ու զետեղյալ բնույթի ձեռագրացուցակ կազմելու խնդիրը։ Մխիթարյան հայրերի կողմ են անում համագրային առումով ձեռնարկել Մայր ձեռագրացուցակ ստեղծելու հույժ կարևոր աշխատանքները, և իշենք տալիս են այդ դործի առաջին և խրախուսելի օրինակը։ 1891 թ. միաբանության տպարանում լույս է տեսնում Հակոբոս Տաշյանի կազմած «Ցուցակ հայերեն ձեռագրաց կայսերական մատենադարանի ի Վիեննա» գրքուկը, ապա նաև Գրիգորիս Գալեմբյարյանի՝ Մյունխենի արքունի մատենադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը։ Մխիթարյանների կողմ և նախաձեռնությունը լայն արձագանք է առաջ բերում աշխարհի ամենատարբեր հայագիտական օջախներում և հաճախեցրելով այդ գործը նախաձեռնում է նիկողայոս Մառը, Բրիտանիայում՝ Ս. Պարոնյանը, Հոռում՝ Յ. Միսքճյանը, Թիֆլիսում՝ Ս. Կանայանը և ուրիշներ։

1895 թ. Վիեննայում լույս է տեսնում այդ շարքի ամենից կատարյալ ու ծանրակշիռ ժողովածուն. խոսքը Հ. Տաշյանի «Ցուցակ հայերեն

ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա» խորագրով աշխատության մասին է։

Ըստ «Հայկական մատենագիտություն» երկհատորյա աշխատության տվյալների, սկզբից մինչև 1976 թ. կազմված հայկական ձեռագրացուցակների ընդհանուր քանակը (տպագրված և ձեռագիր) հասնում է 355 միավորի։ Այս պատկառելի թվակազմում Հակոբոս Տաշյանի հեղինակած ձեռագրացուցակը իր արժանիքներով տուկավին մնում է չգերազանցված։ Ավելին, այդ ձեռագրացուցակի լույս աշխարհ գալուց անցել է շուրջ ինը տասնամյակ և այսուհանդերձ այս ոչ կարճ ժամանակի ընթացքում, երբ հասարակայնորեն մեծացել է տեղեկատվության տեսակարար կշիռը, երբ սեղմ և ստույգ տեղեկություն ձեռք բերելու պահանջը դարձել է դարաշրջանի կենսական հարցերից մեկը, ոչ միայն չի խամրել Հ. Տաշյանի գործի նշանակությունը, այլև այդ աշխատությունը ձեռք է բերել գիտական ու հասարակական նոր արժեք։

Հակոբոս Տաշյանի ձեռագրացուցակն ունի նաև մի այլ, արդիականության տեսակետից շատ կարևոր, առավելություն։ Հեղինակն առանձին բաժին է հատկացրել ձեռագրերի նկարագրության և բովանդակության գերմաներեն համառոտագրությանը, ինչը միաբանության ձեռագրերի բովանդակության

դավաճանությանը հաղորդակից է դարձնում նաև օտարազգի ուսումնասիրողներին:

Չնանարկելով Մխիթարյան միաբանության մատենադարանի թիվ 1—573 ձեռագրերի գիտական նկարագրությունը և այդ ամենը ամփոփելով 1529 էջից բաղկացած առաջին հատորի մեջ, Հ. Տաշյանը ստեղծել է ոչ միայն ձեռագրացուցակ մշակելու ինքնուրույն ու գիտական մի դպրոց, այլև նախանշել է իր հետնորդների՝ այդ գործը թիվ 573 ձեռագրից հետո շարունակողների աշխատանքի սկզբունքները:

Ոչ մեծ դազարից հետո Միաբանության անդամ, բաղժալատաբեր գիտնական Համադասյ Ոսկյանը շարունակում է Հակոբոս Տաշյանի սկսած դործը և 1964 թ. միաբանության տպագրանում լույս է տեսնում «Ցուցակ հայերեն ձեռագրացուցակի Մխիթարյան Մատենադարանին և Վիեննայում աշխատության նաև երկրորդ դիրքը: 1156 էջից բաղկացած այս ստվար հատորի մեջ Համադասյ Ոսկյանը, Տաշյանի մշակած սկզբունքների կիրառումով, հրապարակ է հանում Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում 574—1304 թվահամարների տակ գրանցված ձեռագրերի գիտական նկարագրությունը: Եթե հաշվի առնենք նաև աշխատասիրողի կիրառած բծախնդիր հետևողականությունը, ապա հասկանալի կդառնա, որ նման մի աշխատանք կարելի էր իրականացնել միայն մեծ նվիրումի և տրնաջան աշխատասիրության շնորհիվ: Պետք է նշել, որ ժամանակին գիտակցվել է Հ. Ոսկյանի կատարած դործի մեծությունը և մամուլի էջերում ըստ արժանիության դնահատվել է նրա վաստակը: Հայտնի է, որ դեռևս տրինետյան շրջանից Մխիթարյան հայրերը նախանձախնդիր հետևողականություն են հանդես բերում մշակութային գանձերի հավաքման գործում և նրանց մատենադարանում կենտրոնացվում են մեծ քանակությամբ ձեռագրեր: Հավաքչական աշխատանքները շարունակվում են նաև հետագայում և այսօր Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանը համարվում է աշխարհի ամենահարուստ հայերեն ձեռագրատներից մեկը: Հավաքչական գործը ոչ պակաս հետևողականությամբ շարունակվում են նաև հետնորդները, որոնց մեջ արժանի են հիշատակության Գրիգորիս Գալեմբյարյանի, Բառնաբաս Պիլեգիկյանի, Ռզոստինոս Ամրիկյանի, Մատթեոս Հաճյանի, Ներսես Ակինյանի, Հմայակ Համբարյանի, Սարգիս Բարոյանի, Պետրոս Տեր-Պողոսյանի և ներկայիս արբանյուր Գրիգորիս Մանյանի անունները:

1983 թ. Վիեննայի Մխիթարյան միաբանության տպարանում Օգոստինոս Սերույանի աշխատասիրությամբ լույս է տեսնում ձեռագրացուցակի նաև երրորդ և վերջին հատորը: Եթե

չհաշվենք առաջին հատորում եղած գերմաներեն թարգմանությունը, ապա այս նոր լույս տեսած գիրքը թե՛ էջերի և թե՛ ներառված ձեռագրերի քանակով, ավելի մեծ է ու ծավալուն, քան նախորդ առաջին և երկրորդ հատորները: 1216 լատինադիր էջերի մեջ 0. Սերույանը ընթերցողին է ներկայացնում 1256 միավոր ձեռագրի նկարագրություն: Նա հայագիտության սեղանին է դրել ստվարածավալ մի աշխատասիրություն, որը ոչ միայն ձեռագրերի հերթական համարակալումով, այլև ուղղակի իմաստով հանդիսանում է մեծ երախտավորներ Հ. Տաշյանի ու Հ. Ոսկյանի գործի շարունակությունն ու զարգացումը: Նոր Զուգայի ձեռագրացուցակի մասին «Հանդես մասօրյայի» մեջ հրատարակված գրախոսականում Օ. Սերույանը Տաշյանի կոթողային գործի հետ չափվելով համարելով անհնար, այդ գործով զբաղվողներին խորհուրդ է տալիս հանդես բերել գերմանական ձեռագրացուցակի վերաբերյալ փորձերը: Բնավ շքանկանալով վիճարկելով վաստակաշատ ձեռագրագետի համեստությունը, պետք է ասել, որ նրա հեղինակած ձեռագրացուցակը չափվելու աստիճան մոտենում է Տաշյանի կազմած հատորին: Բոլոր առումներով, և ինքնին՝ որ բան պակասում է հավասարվելու համար, ապա դա վերաբերում է ոչ թե կատարված աշխատանքին, այլ ցանկի մեջ ներառված ձեռագրերի բնույթին: Իրողություն է, որ այս հատորում գրանցված ձեռագրերի մեծագույն մասը չի կարող ուշագրության արժանանալ հնության առումով: Ի դեպ, երկրորդ հատորի տպագրության առիթով քննադատություններ ժամանակին հարց է բարձրացրել «Գիվանական բնույթ և արժեք» ունեցող ձեռագրերի ցանկագրումը «զանց ընկել»: «Զանց ընկել» պահանջը տվյալ դեպքում հարցի լուծման լավագույն միջոցը չէ և ոչ էլ ունի արմատական դրդապատճառներ: Ավելին, բանասիրությունը շատ արժեքներ շրջանցած կլինեն, և թե այլ մտայնությունը իրականություն դառնար: Արդիականության թելադրանքով անառարկելի է դառնում ձեռագրացուցակի մեջ «գիվանական բնույթ և արժեք» ունեցող ձեռագրերի ընդգրկման հարցում Օ. Սերույանի մոտեցման ճշմարտացիությունը, ուստի մի նոր առումով մեծանում է նրա հրատարակած աշխատասիրության արժեքը:

Ձեռագրացուցակի նշանակությունը մեծ է ինքնին, սակայն այսօր՝ տեղեկատվության վիթխարի հոսքի պայմաններում նման գործի լույս ընծայումը ունի արդիականության նաև այլ կարգի պահանջները բավարարող պարտավորություն:

Մի առիթով ձեռագրացուցակի հեղինակը այն միտքն է հայտնում, որ նման աշխատասիրության գնահատման գլխավոր չափանիշը պետք է դառնա բնագրի բովանդակության հակիրճ, բայց

և համակողմանի արտաբերումը: Այս առաջադրանքի իրականացումը որքան կարևոր, նույնքան էլ սովորական ու դյուրին է թվում: Սակայն այդպես թվում է միայն, իրականում այդ նշանակում է կարգալ և ուսումնասիրել հատորի մեջ ներառված բոլոր ձեռագրերը, գիտական հիմունքներով մշակել ու նկարագրել այն և ապա կազմել ընթերցողին ներկայացվող հակիրճ բովանդակությունն ու բնութագրականը: Ժիշտ այդպես է վարվել նաև այս աշխատասիրության հեղինակ Օ. Սեքույանը: Հերթական թվահամարից ու վերնագրից անմիջապես հետո հեղինակը նշում է բնագրի հին համարը, եթե թանկեղ է այդպիսին, ապա գրության վայրը և թվականը: Անցնելով ձեռագրի նկարագրության, աշխատասիրողը ներկայացնում է բնագրի «կենսագրությունը» վերաբերող շուրջ երեք տասնյակի հասնող հարցերի պատասխանները: Ավարտելով նրկարագրությունը, Մատյանն է՝ բաժնում աշխատասիրողը պարզաբանում է հեղինակի անձի ու գրության թվականի հետ կապված փաստերը: Ճշտում է խորագրային տվյալները և տալիս է ձեռագրի հակիրճ բնութագրականը: Բովանդակությունն ենթավերնագրի տակ բնագրից կատարում է կարճ ու իմաստավորված մեջբերումներ, որոնց ծավալը երբեմն հասնում է 3 և ավելի էջերի, ընդմիջարկվում է այն բնութագրականներով ու բացատրականներով, շարունակում է այդ եղանակով նկարագրել ու բացահայտել ամբողջ բնագրի բարդորամասերը, ցույց տալով նաև էջահամարները: Սրանք ձեռագրացուցակի այն հատվածներն են, որոնց միջոցով ուսումնասիրողը կարող է առաջին անհրաժեշտ տեղեկությունը քաղել բնագրի պարունակության մասին, այն չափով, որ առանց սկզբնաղբյուրին դիմելու կարողանա որոշել իրեն զբաղեցնող թեմայի համար այդ ձեռագրի պիտանելության չափը: Մեր կարծիքով ձեռագրացուցակի ամենահիմնական ու պորձնական կողմը սա է, որը, ի պատիվ աշխատասիրողի, իրականացված է գիտական բարձր մակարդակով:

Աշխատանքի մեծության մասին մեր պատկերացումը թերի կմնա, եթե նկատի չունենանք, որ նկարագրության մեջ բերվող տվյալներից շատերը պակասում են ձեռագրերի մեջ և ի հայտ են բերված հետազոտական աշխատանքի օգնությամբ: Այստեղ է, որ աշխատասիրողից պահանջվում է ձեռագրագիտական հմտություն, ուստանց որի գրեթե անհնար է նման մի աշխատության լույս ընծայումը:

Ձեռագրացուցակի անհրաժեշտ ու կարևոր բաղկացուցիչ մասն է կազմում հատորին կցված ցանկերի բաժինը: Հարկ կա ասելու, որ առանց այս ցանկերի օգնության հետազոտողի համար շատ դժվար կ'իլնի գրքի անհատնում էջերի մեջ

իր որոնածը հայտնաբերել: Այս պարագայում հասկանալի է, որ որքան բազմաթիվ ու համակողմանի են ցանկերը, այնքան մատչելի ու արդյունավետ է դառնում ձեռագրացուցակից օգտվելը:

1013—1106 էջերում գետեղված է «Ընդհանուր տախտակ ձեռագրաց» խորագրով ցանկը, որը ըստ հերթական թվահամարների բերված են հետորում ընդգրկված ձեռագրերը, յուրաքանչյուրի բիմաց նշված է էջերի քանակը, չափը, գրի տեսակը, գրության վայրը, գրիչը և ապա շատ սեղմ՝ բովանդակությունը:

1107—1138 էջերի մեջ ընդգրկված է նյութերու համաձայն ցուցակ ձեռագրաց» ցանկը: Այստեղ ձեռագրերը դասդասված են ըստ թեմաների և ամփոփված են 52 անուն վերնագրի տակ: Ահա դրանցից մի քանիսը. աշխարհագրություն, աստղագիտություն, աստվածաբանություն, բուսաբաններ, բնական գիտություններ, զանաքան, երաժշտական, երգարան, թատերական, հին գուրկանություն, մատենագրություն, ճաշոց, ճարտարապետություն, մանկավարժություն, շարականոց, ոսկեփորիկ, պատմություն հայոց, սաղմոսներ, տաղարան, տոնացույց, փիլիսոփայություն, քերականություն և այլն:

Նույնպես վերնագրի տակ ի թիվս մի շարք բնագրերի հետադուրը կարող է հանդիպել. «Կոմիտաս վարդապետի սրբագրած Եկմայանի պատարագի» ցանկագրությանը: Ունենալով այս նկարագրության էջահամարը, բուն նյութերի մեջ՝ 1378 թվահամարի տակ կարգում ենք. «Մատուհան Կատուկ Խմատուկ ձեռագիր չէ: Եկմայանի 1896-ին Այգյակ-Վիլնև տպագրված թերթի» ցուցակները Սյրոյ Պատարագի Հայաստանաց Առաքելական Եկեղեցու տպագիր օրհնակն է. որում վրա Կոմիտաս վարդապետ մատուցող Բաղմալի սրբագրություններ կատարած էջ: Այս ասված է, որ գիրքը միաբանությունն է հանձնել: Լրաժշտագետ Ռուբեն Բերլինցյանը, հավաստելով, որ խաղաղի սրբագրումները կատարել Կոմիտասը: Նկարագրության վերջում բերվում են այն բոլոր էջահամարները (41 էջ), որտեղ Կոմիտասը հայկական խաղաղությունը ու եվրոպական նոտագրությամբ հավելումներ և սրբագրումներ է կատարել:

Բերենք մի այլ օրինակ. Կատուկյանը հայաց վերնագրի տակ ցանկագրված է. Բաթթի Հայոց պատմություն Ա, Հայոց պատմություն Բ: Հիմնական բնագրում 1571 թվահամարի տակ կարգում ենք այս ձեռագրի մանրամասն նկարագրությունը. էջերի քանակը, չափը, տողերի քանակը, թուղթը, որակը, կազմի տեսակը և այլն: Դրի տեսակի դիմաց գրված է. «Վարժ եղբայրույն, տեղ-տեղ դժվար ընթերցելի շղագիր», իսկ գրիչի դիմաց կարգում ենք. «Վիպագիր Բաթթի»:

Այնուհետև տրված է բնութագրականը. «Մատնան է՝ «Հայոց պատմություն հայկադյանց հարստության սկզբից մինչև Արշակունյաց հարստության վերջը: «Ամբողջը.— ավելացնում է աշխատասիրողը.— բաժանված է 45 գլուխներով: Հանելի լեզվով գրված հախակրթարանի պատգամի մըն է», ապա բերում է հնթավերնագրային տվյալները: 1572 թվահամարի տակ նույնպիսի նկարագրություն տրված է նաև Բաֆֆու «Հայոց պատմության» և հատորի ձևագրի վերաբերյալ:

Բառարաններ վերնագրի տակ գրանցված խորագրերը ցույց են տալիս, որ միարանություն մատենադարանում հանգրվանում են 60 անուն ամենատարբեր բնույթի՝ ամբողջական ու թևի բառարաններ. ինչպես պարզվում է ղուգակցվող բնութագրականներից, դրանց մի մասը կարող է ունենալ միայն պատմական արժեք, սակայն կան այնպիսիները, որոնք արժեքավոր են նաև աւսօրվա շահանքներով:

Նվ այսպես տասնյակ ու տասնյակ վերնագրեր ցանկում և բազում ձևագրեր հատորի մեջ:

Եթե անսալով քննողատության ձայնին «զանց բնիկ» դիվանական բնույթ ունեցող ձևագրերը, ապա կոմիտասի, Բաֆֆու և բազում համանրման արժեք ունեցող ձևագրեր պետք է մնային մատենադարանի գրադարանների անհատության մեջ, մինչդեռ աշխատասիրողը դիպուկ կերպով նկատում է, որ «սյս գանձերը չեն հավաքվել անկյուն մը դիզվելու կամ գանձարաններու մեջ արգելափակելու համար»:

Ձևագրագրության որակն ու մակարդակը և ծավալը իրավունք են տալիս Մխիթարյան Մեծերի՝ Տաշյանի, Ալիշանի ու Ավգերյանի, Այարնյանի, Ինճիճյանի ու Ակիյանի, Դովրիկյանի, Գալսեմ-բյալյանի ու Ոսկյանի կողմից թվարկելու նաև Օգոստինոս Սերույանի անունը:

Խ. Ե. ՍԱՄՎԵԼՅԱՆ

SABINE STEPHAN, *Karapet Episkopos Ter-Mkrtschjan (1866—1915) Materialien zu einem Kapitel armenisch-deutscher wissenschaftlicher Zusammenarbeit (Unter Mitarbeit von Loretta Chr. Ter-Mkrtschjan, redigiert und herausgegeben von Hermann Goltz, Halle (Saale). Martin Luther Universität Halle-Wittenberg. Wissenschaftliche Beiträge 1983, 37 (T52)—XI+154 S.*

ԶԱԲԵՆ ՇՏԵՖԱՆ, Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյան (1866—1915): Հայ-գերմանական գիտական համատեղ աշխատանքների նյութեր (աշխատակցությունը Լորեթա Տեր-Մկրտչյանի, խմբագիր և հրատարակիչ Հերման Գոլց, Հալլե, Մարտին Լութերի համալսարան, 1983):

XIX դարի 50-ական թթ. սկսած Գևորգյան ճանապարհով անցնող ու հոգևոր կոչում ստացած ասորից շատերը (Արշակ Տեր-Միքելյան, Կարապետ Տեր-Մկրտչյան, Գարեգին Հովսեփյան, Երվանդ Տեր-Մինասյան և ուրիշներ ուղարկվում են ուսանելու Գերմանիայի համալսարանական կենտրոններում: Գերմանիայում կրթություն ստացած քանասերները էջմիածին բերեցին դասական քանասերությամբ զբաղվելու ճաշակ և անհրաժեշտ հմտություն, փաստորեն հայագիտական մի շարք զարգացների կողմից ձևավորվող «էջմիածնական» դպրոցը, որ XX դարի սկզբին արդեն ուներ իր բնոգծված ուղղությունը:

Քանասիրական այդ դպրոցի նշանավոր գործիչներից էր Կարապետ Տեր-Մկրտչյանը, որի կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրություն է հրապարակել Վիտենբերգի (Գերմանիա) Մարտին Լութերի համալսարանը Գերբրյունս էրնսթի Զարինե Շտեֆանը, և Տեր-Մկրտչյանի աշխատակցությամբ ու հրատարակել-խմբագիր Հերման Գոլցի ջանքերով: Գերբրյունս

սկսվում է վերջինիս առաջարկով (էջ V—VII), որին հաջորդում է Զարինե Շտեֆանի ուսումնասիրությունը՝ նվիրված Կարապետ Տեր-Մկրտչյանի կյանքին ու գործունեությանը (էջ 1—67): Հավելվածում գետեղված են Կարապետ Եպիսկոպոսի նամակները Հայի համալսարանի իր ուսուցիչ Ֆ. Լոթֆուին (էջ 68—78), ապա հաջորդում է Կարապետ Տեր-Մկրտչյանի աշխատությունների մատենագիտությունը (էջ 77—105), կազմված և Տեր-Մկրտչյանի ձեռքով:

Գրախոսվող աշխատության ներածությունում տրվում է XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ-գերմանական գիտամշակութային կապերի համատեղ բնութագիրը: Այդ ժամանակաշրջանի է ուսումնասիրված: Այս հանգամանք իր առաջարկում շեշտում է նաև Հերման Գոլցը, նշելով, որ գերմանական համալսարաններում (Հալլեյցի, Հայլե, Բեռլին, Տյուբինգեն) կրթություն ստացած նշանավոր հայագի գիտնականների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը նպաստում է այդ խնդրի պարզաբան-